ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 138 - Ա 15 մարտի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21 - ի N 457- Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողով ձևավորելու և հանձնաժողովի գործունեության աշխատակարգը հաստատելու մասին» N 52-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովների կազմերը՝ ըստ տարածաշրջանների.

ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔ

Դվոյան Սևակ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ /նախագահ/
Կուռոյան Պարույր	- «Գավառի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն

Գրիգորյան Գայանե	- «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի բուժական գծով տնօրենի տեղակալ
Գևորգյան Մելանյա	- «Սարուխանի ԲԱ» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկ
Մուսոյան Լուսինե	- «Կարմիրգյուղի ԲԱ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Արևշատյան Լավրիկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Գավառի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատար

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔ

Վարդանյան Լուսինե	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար /նախագահ/
Հարությունյան Անդրանիկ	- «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն
Քիշմիրյան Աշոտ	- «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի բուժական գծով տնօրենի տեղակալ
Ղազարյան Հասմիկ	- «Զոլաքարի ԲԱ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Սարգսյան Ավետիք	- «Գեղհովիտի ԲԱ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ավետիսյան Հոմերոս	- «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի թերապևտիկ ծառայության ղեկավար
Խաչատրյան Արայիկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Մարտունու սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾՔ

Խլոյան Աշխեն	- «Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն /նախագահ/
Վարդանյան Ժասմենա	- «Վարդենիսի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի ակնաբույժ և թերապևտ
Սիմոնյան Մելսիդա	- «Մեծ Մասրիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Շահինյան Շահեն	- «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Դավթյան Արթուր	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔ

Պետրոսյան Մարտին	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող /նախագահ/
Էլիզբարյան Գայանե	- «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն
Խալաֆյան Հրաչյա	- «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Գևորգյան Կարինե - «Դմաշենի ԲԱ» ՊՈԱԿ -ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մկրտչյան Վիգեն - «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ստեփանյան Գևորգ - «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի «Թերապևտիկ բաժանմունք»-ի պատասխանատու

Վարդանյան Արտակ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Սևանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔ

Մելքումյան Արմենակ - «Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ-ի տնօրեն /նախագահ/

Խեչոյան Արարատ - «Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ-ի մաշկաբան

Ինանց Այգեն - «Դպրաբակի ԲԱ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Խաչատրյան Մարինե - «Ճամբարակի ԱԿ» ՓԲԸ-ի բժիշկ՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ

Հովհաննիսյան Ռիտա - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի Ճամբարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ».

2) որոշման 2-րդ կետով հաստատված աշխատակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշման 4-րդ կետի «Նարեկ Գրիգորյանին» բառերը փոխարինել «Նարեկ Մանուկյանին» բառերով:

15.03.2021

X

ԳԵՎ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GEV 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի մարտի 15-ի
N 138 - Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2018 թվականի մարտի 13-ի
N 52 - Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց (այսուհետ՝ Շահառու) պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ՀՀ Գեղարքունիքի մարզի ուղեգրող հանձնաժողովի (այսուհետ՝Հանձնաժողով) գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի N 457-Ա հրամանով և այլ իրավական ակտերով:

3. Բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա Հանձնաժողովը տրամադրում է ուղեգիր՝ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով:
4. Հանձնաժողովի կողմից տրված ուղեգրով բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժկական օգնություն և սպասարկում իրականացնող բոլոր բժշկական կազմակերպություններում:
5. Հանձնաժողովի կողմից տրված ուղեգրի գործողության ժամկետը մեկ ամիս է՝ տրման օրվանից:

II. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

6. Շահառուն բուժօգնություն ստանալու նպատակով դիմում է ներկայացնում Հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպություն, որին շահառուն կցագրված է, ըստ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված ցանկի՝ համաձայն Ձև N 1-ի:
7. Շահառուի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով Հանձնաժողովին կարող են դիմել նաև պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները՝ գրավոր միջնորդությամբ:
8. Դիմումին կամ գրավոր միջնորդությանը կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,

2) ուղեգիր կամ տեղեկանք, կամ քաղվածք՝ ամբուլատոր բժշկական քարտից, կամ բժշկական եզրակացություն՝ տրված հիվանդին բուժող բժշկի կողմից, այդ թվում՝ անհետաձգելի ցուցումներով հիվանդանոց ընդունված դեպքերում, կամ եզրակացություն՝ տրված համապատասխան նեղ մասնագետի կողմից կամ դրանց պատճենները,

3) սույն ենթակետում նշված խմբերից որևէ մեկին պատկանելությունը հավաստող, իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի պատճենը՝ առկայության դեպքում՝

ա. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0.01 միավորից մինչև 28.00 միավորը ներառյալ անապահովության միավոր ունեցող ընտանիքների անդամներ,

բ. 65 և բարձր տարիքի միայնակ կենսաթոշակառուներ,

գ. փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների անդամներ,

դ. ՀՀ-ում մշտական բնակություն ունեցող ՀՀ քաղաքացիություն չունեցող հղի կանայք՝ միայն ծննդալուծումը,

ե. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ,

զ. ժամանակավոր խնամքի հաստատություններում խնամվող երեխաներ,

է. բազմազավակ (4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքի անդամներ,

ը. երեխա խնամող միայնակ անձ,

թ. Հայրենական մեծ պատերազմի և նրանց հավասարեցված անձանց ընտանիքի անդամներ,

ժ. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին 19-22-րդ կետերով բուժաշխատող (ավագ, միջին և կրտսեր) հանդիսացող անձինք, որոնց աշխատավարձը չի գերազանցում հաշվարկային նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը (150 հազար ՀՀ դրամը):

ժա. որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան անձինք,

ժբ. Քառօրյա պատերազմի մասնակիցներ,

ժգ. արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում գտնվելու վայրն անհայտ դարձած անձանց ընտանիքի անդամներ (ամուսին, ծնող, երեխա, քույր, եղբայր):

9. Շահառուի կողմից դիմումին կից ներկայացվող փաստաթղթերով հիմնավորվող տեղեկությունները ներկայացնելու բարդություններ առաջանալու դեպքում Հանձնաժողովը կարող է անձամբ դիմել համապատասխան իրավասու մարմնին՝ Շահառուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար:

10. Դիմումները և գրավոր միջնորդությունները ընդունվում են ինչպես թղթային, այնպես էլ՝ էլեկտրոնային եղանակով, Հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացվում Հանձնաժողովի նախագահին և անդամներին:
11. Հանձնաժողովի կողմից բուժօգնության համար տրված ուղեգիրը կնքվում է համապատասխան հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպության կնիքով:

III. ՈՒՂԵԳՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:
13. Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են շաբաթական մեկ անգամ՝ դիմումների կամ գրավոր միջնորդությունների առկայության դեպքում:
14. Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ կարող է հրավիրվել արտահերթ նիստ:
15. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

16. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի, անդամների և քարտուղարի կողմից:
17. Հանձնաժողովի նախագահը՝
1) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը,
2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը,
3) մասնակցում է որոշումների կայացման գործընթացին,
4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքները:
18. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ Հանձնաժողովը ձևավորող մարմնի որոշմամբ:
19. Հանձնաժողովի անդամները՝
1) մասնակցում են Հանձնաժողովի նիստերին,
2) մասնակցում են որոշումների կայացման գործընթացին,
3) ծանոթանում են և ստորագրում Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:
20. Հանձնաժողովի քարտուղարը՝
1) ապահովում է Հանձնաժողովի նիստերի կազմակերպումը,
2) ապահովում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը:
3) սույն աշխատակարգով և մեթոդական ուղեցույցով սահմանված կարգով նախապատրաստում է.

ա. Շահառուի բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու ուղեգիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 7-րդ հավելվածով հաստատված Ձև 1-ին համապատասխան,

բ. բուժօգնության ուղեգիրը տրամադրելը մերժելու մասին պատասխան՝ կարգով հաստատված Ձև 3-ին համապատասխան,

4) ապահովում է բուժօգնությունը կազմակերպելու ուղեգրի կամ ուղեգիրը տրամադրելը մերժելու մասին պատասխանի տրամադրումը դիմումատուներին մեթոդական ուղեցույցի հաստատված Ձև 3-ին համապատասխան՝ առձեռն կամ էլեկտրոնային տարբերակով,

5) կատարում է համապատասխան նշում սույն մեթոդական ուղեցույցի Ձև 2-ով հաստատված գրանցամատյանում,

21. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Դիմումները և գրավոր միջնորդությունները քննարկվում են առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերը քննարկվում են երկու աշխատանքային օրվա ընթացքում կամ արտահերթ:

23. Դիմումները կամ գրավոր միջնորդությունները քննարկվում են, և ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա Հանձնաժողովն ընդունում է համապատասխան որոշում:

24. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների կեսից ավելի կողմ ձայներով:

25. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկության ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

26. Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

27. Հանձնաժողովի կողմից կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բավարարել շահառուի դիմումը և տրամադրել ուղեգիր՝Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման 7-րդ հավելվածով հաստատված Ձև 1-ին համապատասխան,

2) մերժել շահառուի դիմումը և տրամադրել պատասխան՝ սույն մեթոդական ուղեցույցի հաստատված Ձև 3-ին համապատասխան:

28. Հանձնաժողովի կողմից բուժօգնության համար տրված ուղեգիրը կնքվում է

համապատասխան բժշկական կազմակերպության կնիքով:

28. Շահառուի բուժօգնությունը կազմակերպելու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրումը կարող է մերժվել, եթե.

ա. ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի փետրվարի 21-ի N 457-Ա հրաման մեթոդական ուղեցույցի 13-րդ կետով սահմանված անհրաժեշտ պայմաններին և պահանջներին,

բ. պացիենտն արդեն իսկ ընդունվել է բժշկական կազմակերպություն, գտնվում է բուժման մեջ կամ դուրս է գրվել, բացառությամբ անհետաձգելի հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերի,

գ. բուժման վճարովի եղանակը ընտրելու և վճարովի ծառայությունների պայմանագիրը կնքելուց կամ համապատասխան վճարումները կատարելուց հետո,

դ. բացակայում են կամ պատշաճ ներկայացված չեն բժշկական ցուցումները,

ե. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման N 2 հավելվածի 9.3-րդ կետով սահմանված կարգով հաստատված չափաքանակների սպառման դեպքում,

զ. տվյալ տարվա ընթացքում շահառուն արդեն մեկ անգամ Հանձնաժողովի կողմից ուղեգրվել է հիվանդանոցային բուժօգնության:»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ